ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԲՄԾՁԲ-7/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 5-ը հունիսի 2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Էրիզ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասլանյանի (համատեղ գործունեության /կոնսորցիումի/ պայմանագիր «Լարս» ՍՊԸ-ի հետ),, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 27.02.2019թ. կնքված № ԲՄԾՁԲ-7/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.14 կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայություն (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 106 715 050 (մեկ հարյուր վեց միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Նաիրի Զարյան 24
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 1150052181818
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 00089186
ՀՎՀՀ 02522157	
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գին ՀՀ դրամ	Գնման ժամանակացույց
1	Սննդի պատրաստման ծառայություն /«Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանում հանգստացող անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/	մարդ/օր	Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի <<Լեռնային Հայաստան>> հանգստյան տուն-առողջարանի հրամանատարի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա (ըստ հայտերի)	4490	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում
Ծառայությունների առավելագույն գումարը կազմում է 106 715 050 (մեկ հարյուր վեց միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար հիսուն) ՀՀ դրամ					

Ծանոթություն՝ Մատուցվող ծառայության վայրը՝ ք.Դիլիջան, Կամոյի փողոց, Լեռնային Հայաստան առողջարան հասցեում:

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ								
		CPV կոդը	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Սննդի պատրաստման ծառայություն /«Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանում հանգստացող անձնակազմի սննդի պատրաստման ծառայություն/	55321100/526	25000000	25000000	60000000	60000000	60000000	106715050	106715050	106715050

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Էրիզ» ՍՊԸ
ք. Երևան, Նաիրի Զարյան 24
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500521818118
ՀՎՀՀ 00089186

տնօրեն

Ա. ԱՍԼԱՆՅԱՆ